

ՎԱՂՆՋԱՏԱՅԵՐԵՆԻՅ ԱՎԱՆԴԱԾ ԱՐՏԵՍՏԱՎՈՐԱՆԻՇ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ

Արհեստները մարդկային քաղաքակրթության վաղնջական նշանակալից դրսևորումներից են: Դրանց փարափեսականների ծագումն ու ձևաբովանդակային զարգացումը ուղեկցում են մարդուն նրա գործունեության բոլոր փուլերում անխափր և պայմանավորված են բնակլիմայական սոցիալ-տնտեսական, հասարակական փոփոխությունների փոխհարաբերության, գեղագիտական ընկալման, անհատական ճաշակի դրսևորման, զանազան պահանջմունքների բավարարման հետ:

Ինչպես նշել է Գ. Բ. Ջահուկյանը, «Նոր քարի դարի մարդկանց, այդ թվում՝ հնդեւրոպացիների կյանքում նշանակալից դեր է խաղացել փնայնագործությունը՝ ներքին կարիքները բավարարող, այսպես կոչված՝ փնային արհեստագործությունը: Շինարարական զանազան աշխատանքները, գործիքների, զենքերի և փոխադրամիջոցների, ամանեղենի և հագուստեղենի պատրաստումը պահանջում էին հում նյութի որոշակի մշակում և համապատասխան ունակությունների փոխանցում սերնդից սերունդ: Նայքսի է նույնիսկ, որ նոր քարի դարն սկսվում է կավագործական զանազան արտադրանքներով, և նոր եւրոպացիներին հարույ է եղել թելային նկարագրողները»¹:

Որ հնդեւրոպացիների կյանքում փնայնագործությունը (փնային արհեստագործությունը) կարևոր դեր է խաղացել, վկայում են ոչ միայն հնագիտական զանազան գրառումները, այլև բազմազան մասնագիտացված գործողությունների և դրանց փված արտադրանքների անվանումները հնդեւրոպական ժողովուրդների լեզուներում: Նույնվորպացիների լեզվում եղել են հարույ բառեր և եզրույթներ այդ արտադրատեսակների պատրաստման հետ կապված գործողությունների համար:

Արհեստների առաջ գալը, փարաբնույթ ու փարափեսակ դրսևորումները, այլ գործունեություններից բացի, ժողովուրդների փոխշփումների արդյունք են: Նայքսի է, որ հնագույն ժամանակներից ի վեր հայ ժողովուրդը սերպ շփումներ է ունեցել իրանական ժողովուրդների հետ. դրանով է պայմանավորված արհեստագործական անվանումների մեջ այդ լեզվից կարարված փոխառյալ շերտի ավելի ծավալուն լինելու հանգամանքը բնիկ հայերենի համեմատությամբ: Սակայն քանակային կողմը չի արտացոլում բառիմաստների գործառական, որակական առանձնահատկությունները: Փոխառությունների գերակշիռ մասը, դեռևս գրարարյան շրջանից սկսած, հայերենի բառապաշարի կայուն ու յուրացված շերտ է կազմում:

Ըստ Աճառյանի՝ «արուստ» և «արհեստ» բառերից նախնականը եղել է «արուստ»-ը, որը սկզբնապես ունեցել է «ճարարություն, մրավոր կամ ձեռական արհեստ, ձեռագործ, ճարար շինված բան, խաբեական հնարք» իմաստները: Իսկ «արհեստը» հետագայում երկրորդաբար առաջացած ձև է: Նոր գրական հայերենում է, որ այդ երկու բառերը իմաստային փոքրերակման են ենթարկվել. **արվեստ** նշանակում է «մրավոր արվեստ»,

1 Գ. Բ. Ջահուկյան, Նայք լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Եր., 1986, էջ 80-81:

իսկ **արհեստը**՝ «ձեռական, ձեռքի արվեստը»: Այնուամենայնիվ, Աճառյանը **արուեստը** բառը չի ստուգաբանում: Նա հղում է ՆՏԲ-ին և ուրիշների. «ՆՏԲ լծ. լատ. ars, artis «արուեստ» և յն. «սիրահար, սիրող» (էջ 372 ա): Նիւթ, հարուստ բառից: Pedersen, Նայ. դր. լեզ. 90-ևստ մասնիկով **արու** բառից, իբր թե բառը նախապես նշանակում էր «արություն, virtus», հետոյ «ճարտարություն, virtuosite», Սանրալճեան ՆԱ 1913, 401 խաղ aris, լր. ars ձևերի հետ»²:

Արուեստը բառի և հարկապես նրա **արհեստը** փոքրերակի բնիկ հնդեւրոպական ծագում ունենալու հանգամանքը Գ. Զահուկյանը կասկածելի է համարում: Նա ավելի հավանական է գրում իրանական ծագումը³. < aruvast (*arvat-ta-). հմմտ. հ. պ. aruvasta «ամբողջում, առույգություն, պնդակազմություն», պրթ. rwst «ճարտարություն» (բաղաբկության հայ. -եստ-ով հիմքերի հետ)»⁴:

Իսկ **արվեստը** և **արհեստը** բառերի քննությանը նվիրված նրա մի հոդվածում կարդում ենք. «... Արուեստը բառի ... էստ-ը կարծես խոսում է նրա հայկական ծագման մասին՝ հ. է. * ar- «կցել, հարմարեցնել» արմարից (հմմ. լատ. ars «արվեստ»), բայց կա իմաստով փոքր-ինչ փոքրեր հ.պ. arvastam բառը»⁵:

Արհեստը հասկացության բառարանային սահմանումները միմյանցից առանձնապես չեն փոքրերվում: Այսպես, Նայկական սովերական հանրագիտարանում **Արհեստները** բառահոդվածի տակ կարդում ենք. «Պատրաստի արտադրանքի մանրապրանքային արտադրություն՝ հիմնված աշխատանքի ներարտադրական բաժանման բացակայության պայմաններում...»⁶: Իսկ Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» **արհեստը** բառի համար տրված է հետևյալ ձևակերպումը. «Որոշակի հմտություններ պահանջող և ձեռքի պարզ գործիքներով կատարվող աշխատանք՝ զանազան բաներ պատրաստելու և շինարարական նպատակների համար»⁷:

Փոքր-ինչ թերի է անգլերենի հանրահոգակ բառարաններում **արհեստը** տերմինին տրված բացատրությունը. «Գործ, հարկապես այնպիսի, որ կապված է ձեռքի աշխատանքի հետ և պահանջում է հատուկ վարժանք ու հմտություն»⁸: Մյուս, ոչ պակաս հայտնի բառարանում բառի բացատրությունն է. «Զբաղմունք, հարկապես այնպիսի, որը պահանջում է ձեռքով աշխատելու որոշակի հմտություն»⁹: Ինչպես տեսնում ենք, անգլերենի երկու բառարաններում էլ բացակայում է **գործիքի**՝ որպես աշխատանքի միջոցի հանգամանք, որը, մեր կարծիքով, կարևոր պայման է **արհեստը** հասկացության սահմանման համար: Նշենք նաև, որ սույն բառը մի քանի իմաստ ունի անգլերենում, և մեր հիշատակված բառարաններում առաջինը նշվում է **առեստություն** իմաստը:

Արհեստավորանիշ բառերի համակողմանի քննությունը թե՛ լեզվաբանական, թե՛ պարմաագագրական և մշակութային տեսակետներից որոշակի կարևորություն ունի: Արհեստագործական անվանումների իմաստային դաշտը յուրահատուկ մի համակարգ է.

2 Նր. Աճառյան, Նայերեն արմատական բառարան, հ. 1, էջ 332:

3 Տե՛ս Գ. Զահուկյան, նշվ. աշխ էջ 265:

4 Անդ, էջ 517

5 Գ. Բ. Զահուկյան, *Արվեստը և արհեստը* բառերի մասին, «Սովերական դպրոց», 1981, գ., 39:

6 ՆՄՆ, հ. 2, էջ 83:

7 Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1 Եր., 1976, էջ 135:

8 "Oxford advanced Learnewis Dictionary of Current English"

9 Longman Lexicon of Contemporary English, 1996:

որում արքայացված ենք Կրեմլում ժողովրդի լեզվամիասնությունը, հոգեբանությունը, պարամաշակութային, քնկերային-տնտեսական գործընթացները, հասարակական հարաբերությունները և այլն: Արձանագրված բառամթերքը հնարավորություն է ընձեռում դասակարգելու հայերենի քարքեր փոփոխում այս իմաստային շերտի բառակազմական կադապարներին, իմաստափոխության, հոմանշային զուգադրությունները և ուղենշելու զարգացման միպոմները:

Բառակազմական տեսակետից կարևորվում են բնիկ հայերեն կամ որպես այդպիսին գիտակցվող բառերը, որոնք, բնական է, շար քիչ քանակ են կազմում, քանի որ մեզ հեռաքրքրող իմաստային խմբի գաղափարների մեծ մասը վաղնջահայերենում չի եղել՝ համապարասխան իրություններին ու գաղափարներին հայերին անծանոթ լինելու պարզառով: Հայերենում պահպանված արհեստագործական տերմիններ ցույց տվող բառերի մի մասը հնդեվրոպական ծագում ունի և ժառանգված է նախալեզվից: Այսպես, ըստ Ն. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանի»՝ հ.-ե. ծագում ունեն **դերձակ, հանդերձ, դերձան, աքաղձ, դուրզն, դակու, դարբին** բառերը:

Դերձ արմատը անկախաբար չի կիրառվում, այլ **դերձակ, դերձան, հանդերձ, հագուստ** բառերում: Լ. Նովիանինյանը բառիս մասին գրում է. «Ոմանք, նկարի առնելով իրանական լեզուներում նշված արմատի գոյությունը՝ պիլ. darzik, պրս. darsi «դերձակ», պրս. darz, darza «կար», նաև **դերձ**-ի հետ ունեցած հնչյունական համապարասխանությունները, **դերձ**-ը համարում են իրանական: Սակայն նույնքան հնարավոր է բառը բխեցնել հ.-ե. dherg'h-ից, որը հայերենում տվել է դարձ «դառնալ» և դերձ «կարել»: Ուրեմն **դերձակ, դերձան, հանդերձ** բառերը կարող ենք համարել ևս հայերեն»¹⁰:

Նայ. դերձ արմատը, որից ունենք դերձակ, հանդերձ «հագուստ, զգեստ», դերձան «կարի թել», Աճառյանը ծագումաբանորեն կապված է համարում պիլ. darzik, պրս. darzi դերձակ, պրս. darz «կար», darzan «ասել», ալբան. drezn «դարձնել, ոլորել, գալարել» և հայ. դարձ (*դարձ-ն-ալ, դառնալ) բառերի հետ, որոնք բոլորն էլ ծագում են հ. -ե. *dherg'h- արմատից: Այս դեպքում ուշագրավ է, որ լեզուների մեջ հաճախ «կարել» և «մանել» իմաստները առաջանում են «պարել, դառնալ» իմաստներից. հմմտ. հուն. *νύω*, լատ. *neo* «մանել», հուն. *νύω* «թել», *νάω* «կարել», ռուս. *нить* «թել» և վերջիններիս հետ ծագումաբանորեն կապված՝ հ. **հյուս**. *sosa* «դարձնել, ոլորել», մ. իռլ. *snim* «մանված, դարձ» բառերը: Այդպես էլ հայերենում ունենք մի կողմից՝ մանել «թել մանել», մանած «թել», մյուս կողմից՝ ման գալ «պարվել, դառնալ, շրջել»: Ըստ այդմ՝ հ. և. dherg'h-արմատը, որ ալբաներենում տվել է «դարձնել, ոլորել և մանել» իմաստները, իսկ իրանական լեզվաճյուղում՝ «կարել» իմաստը, հայերենի մեջ նույն արմատի ձայնդարձի Ե աստիճանով ձեռից տվել է *dherg'h-ը հայ. դարձ «դառնալ»¹¹:

Աքաղձ բառը, որը նշանակում է «առհասարակ շինվածանյութ, մասնավորապես փայտեղեն», և որից ունենք արաղձագործ, արաղձարար բառերը, ծագումաբանորեն կապված է սանսկ. *dalafi* «ճեղքում է, պայթում է», *dala* «կտր, բաժին», հուն. *δελος* «գրելու տախտակ», լատ. *dolo* «քաշել, փայտի վրա աշխատել», չեխ. *dlaha* «տախտակամածի տակի տախտակները» բառերի հետ, և ծագում է հ.-ե. *del* «ճեղքել, արվեստով կտրել, փայտի

10 Լ. Նովիանինյան, Հայերենի իրանական փոխառությունները, Եր., 1990, էջ 214:

11 Տե՛ս Ն. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. I, Եր., 1971, էջ 656-657, 639:

վրա աշխարհի» արմարի ձայնդարձի գրո ասարիճանով ժլ րարբերակից՝ ա նախահավելված ձայնավորով եւ ձ աճականով¹²:

Դ-ակու «ուրագ կամ կացին» բառը, հուն. *θηρυα* (դոր. *θαρυα*) «սրել», *θηρυαειον* «սուր, հարու» բառերի հետ միասին ծագած է համարվում *հ. ե. *dhag* արմարից¹³:

Դ-արբին «երկաթագործ, վարպետ, արհեստավոր» բառը ծագումնաբանորեն կապված է *հ. ե. *dhabh ro* նախածնի հետ: Նայերենին ցեղակից ձևեր են համարվում լատ. *faber* «վարպետ, արհեստավոր», *fabrē* «ճարտարորեն, վարպետորեն», *fabrica* «արհեստանոց», *fabrire* «պարբասել, սրելով», *fabricare* «շինել, ձևակերպել», գոթ. *ga-daban* «հարմարեցնել», *ga-dōbs* «պարշաճ, հարմար», լիւ. *dabšnus* «գեղեցիկ», *հ. պ. dobrn* «գեղեցիկ, լավ», *podobati* «պարշաճել» (հմմտ. *ռուս. подобный* »х подобать բառերը): Բոլորի պարզ արմարն է *հ.-ե. dhabh*, որի նախնական իմաստը եղել է «սրելով, գեղեցիկ կերպով հարմարեցնել»¹⁴: Գ. Բ. Ջահուկյանը գրում է. «Նայրնի չէ, րեղի ունեցել է արդյոք հնդեւրոպական *r-ի՝ հայերենին հարույկ դրափոխությունը՝ *dhabhro-> դարբին» (էջ 228):

Ի րարբերություն վերոհիշյալ րերմիների՝ հայ. **հյուսն**, **բրուս** բառերի ծագումը անհայտ է կամ կասկածելի: Դրանցից **հյուսն** բառի դեպքում Ն. Աճառյանը ենթադրում է, որ թերևս այդ բառը կապված է «հյուսել» արմարի հետ, եւ իմաստային զարգացման համար վկայակոչում է մեկ ընդհանուր արմարից ծագող լատ. *texo* «հյուսել» եւ հուն. *τεκτων* «հյուսն» բառերը: Սակայն արմարը նա չի ստուգաբանում¹⁵:

Ինչ վերաբերում է հայ. **բրուս** բառին, Աճառյանն այն նույաես չի ստուգաբանում, իսկ Գ. Ջահուկյանը գրում է, որ **բրուս** եւ արհեստի հետ կապված մի շարք այլ բառերի բնիկ հնդեւրոպական համարժեքները հայերենում բացակայում են¹⁶:

Բիր-ը համարվում է բնիկ հայերեն բառ՝ *bhi-ro-bhici*-«խիլել» արմարից, բայց հավասար իրավունքով այն կարող է համարվել իրանական փոխառություն, մանավանդ, եթե կապված է **բահ**-ի հետ (**bher*-«ծակել, կտրել, ճղել», եթե ոչ **bhbeh*-ից՝ «փորել») (Գ. Բ. Ջահ., էջ 551): Այնուհետև րողարակի հղումով Գ. Բ. Ջահ.-ը նշում է, որ «Ն. Աճառյանը բառը կապում է **բահ**-ի հետ, բայց համարում է բնիկ հայկական՝ սխալ հիմունքով վկայակոչելով **մահ** բառը, որ իրականում նույնպես իրանական ծագում ունի» (ն. ր.):

Դուրզն արմարի մասին վկայակոչումները կցկրուր են: Անրուան Մեյեն գրում է, որ «հայ. **դուրզն** բառը «կավագործի անիվ» վաղուց համեմարվել է հուն. անիվ բառի հետ, սակայն այն կարող ենք բացատրել միայն այն դեպքում, եթե ենթադրենք **dhurg-* սկզբնաձևը, որ ոչ մի րել չի հանդիպում, սակայն հնարավորություն կրար պահպանելու մի ստուգաբանություն, որ կարծեք պարբաղիր է»¹⁷: Ըստ Ն. Աճառյանի՝ **դուրզն** «բրուսի անիվ» բառը հուն. *σφοχς* «անիվ, բրուսի անիվ» *հ. իռլ. droch* «անիվ» բառերի հետ միասին ծագում է *հ.- ե. dhrogh-* նախածնից: Ընդ որում, հայերեն ձևը բացատրելու համար ենթադրվում է, որ **dhrogh-* արմարը հայերենում ենթարկվել է հնչյունների դրափոխության. **dhrogh* > **դրուզ* > **դուրզ* > **դուրզն**¹⁸:

12 Տնն անդ, էջ 284-285:

13 Տնն անդ, էջ 613:

14 Տնն անդ, էջ 636):

15 Տնն Ն. Աճառյան, Արմարական բառարան, *հ. III*, Երևան, 1977, էջ 101; 102:

16 Տնն Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 265: Ն. Աճառյան, Արմար., *հ. I*, էջ 493:

17 Անրուան Մեյեն, Նայագիրական ուսումնասիրություններ, Եր., 1978, էջ 40

18 Տնն Ն. Աճառյան, նշվ. աշխ., էջ 687: